

Հաստատված է

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22 նիստում

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՍԱԼՍԱՐԱՆԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն փաստաթղթով սահմանվում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման (այսուհետ՝ ՈԲ) ծրագիրը (2017-2021թթ.) կազմակերպելու կարգը:
- 1.2. Կանոնակարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությանը և ԵՊՀ ԻՄ 2016 -2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան:
- 1.3. ԵՊՀ ԻՄ-ում պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ ծրագիրը կազմակերպվում է ըստ «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2017-2021 թթ.)» մեթոդական փաստաթղթի:
- 1.4. ՈԲ ծրագրի նպատակն է զարգացնել ԵՊՀ ԻՄ դասախոսական կազմի ներուժը՝ ապահովելով նրա ընդհանուր, մանկավարժական-հոգեբանական և մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացումը:
- 1.5. Դասախոսների ՈԲ ծրագիրը ֆինանսավորվում է ԵՊՀ ԻՄ կենտրոնացված միջոցների հաշվին¹:
- 1.6. Կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.
 - **դասախոսների ՈԲ հենքային ծրագիր (այսուհետ՝ Հենքային ծրագիր)**՝ «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիր (2017-2021 թթ.)»,

¹ Այլ բուհերի դասախոսներ ծրագրին մասնակցում են վճարովի հիմունքով

- **դասախոսի ՈԲ անհատական ծրագիր (այսուհետ՝ Անհատական ծրագիր)**՝ ԵՊՀ ԻՄ դասախոսի՝ Հենքային ծրագրի հիման վրա կրթագիտական բնագավառի նոր պահանջներին և իր նախասիրություններին համապատասխան կազմած ծրագիր:

2. Ծրագրի դասախոսական համակազմը

- 2.1. ԵՊՀ ԻՄ դասախոսը ՈԲ է անցնում հնգամյա ժամկետում (2016/2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակից սկսած)՝ Անհատական ծրագրով: Վերջինիս հնգամ-յա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ. ընդ որում՝ 7-12 կրեդիտը ձևավորվում է պարտադիր, 18-23-ը՝ կամընտրական բաղադրիչներից:
- 2.2. ՈԲ-ն պարտադիր է համարվում վաթսուն տարին չլրացած հիմնական դասախոսների համար մանկավարժական առնվազն երկու տարվա անընդհատ ստաժի դեպքում: ԵՊՀ ԻՄ մյուս դասախոսները ՈԲ ծրագրին կարող են մասնակցել կամընտ-րաբար՝ գործատուի համաձայնությամբ:
- 2.3. Ներկա ծրագրին մասնակցող ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական համակազմը բաժանվում է երկու խմբի՝
 - **Առաջին՝ ծրագրին սահմանված հնգամյա շրջափուլով (2017-2021 թթ.) մասնակցողներ:** Սա հիմնական խումբն է, և ներկա ծրագիրը լրամշակված է նրա մասնակիցների համար՝ բնականաբար հաշվի առնելով նաև մյուս խմբի շահերը:
 - **Երկրորդ՝ ծրագրին անհատական հնգամյա շրջափուլով մասնակցողներ:** Այս խմբում ընդգրկվում են նախորդ և ներկա ծրագրերին ուշացումով միացած այն ունկնդիրները, որոնցից յուրաքանչյուրը ՈԲ է անցնում իր ժամկետում: Նրանց համար գործում են առաջին փուլի հիմնական պահանջները կրթական պարտադիր բաղադրիչների մասով:

3. ՈԲ ծրագրի կառավարումը

- 3.1. Ծրագրի արդյունավետ կառավարումն իրականացնելու նպատակով ձևավորվում է ՈԲ խորհուրդ՝ ԵՊՀ ԻՄ ուսումնական վարչության պետի խաղաղությամբ:
 - 3.1.1. Ծրագրի կազմակերպական հարցերով ընդհանուր պատասխանատվությունը և համակարգումը վերապահվում են ուսումնական վարչությանը (այսուհետ՝ ՈւՎ):
 - 3.1.2. Ծրագրի բովանդակային հարցերով, ըստ կրթամասերի ու բաղադրիչների, ընդհանուր պատասխանատվություն են կրում ԵՊՀ ԻՄ համապատասխան ստորաբաժանումները և նրանց ղեկավարները:
- 3.2. Ծրագրի շահառուները ԵՊՀ ԻՄ կայքի միջոցով մշտապես իրազեկվում են ՈԲ գործընթացի և նրա արդյունքների մասին:
 - 3.2.1. ԵՊՀ ԻՄ կայքում տեղադրվում են ՈԲ ծրագրին վերաբերող բոլոր հիմնական նյութերը՝ փաստաթղթերը, դասընթացների ցանկերը, ուսումնական ծրագրերը և ժամանակացույցները՝ օգտակար հղումներով: Ունկնդիր դասախոսը, լրացնելով մասնակցության հայտի ձևաթուղթը, ծրագրի կրթական կառուցամասով իր համար կարող է ապահովել տվյալ դասընթացին մասնակցության գրանցում:
 - 3.2.2. Ծրագրի հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասով դասախոսի

ամենամյա հաշվետվությունը էլեկտրոնային տարբերակով հասանելի կդառնան ՈւՎ-ին, որն ըստ այդ փաստաթղթի կհաշվարկի համապատասխան կրեդիտները:

- 3.3. Ծրագրի գլխավոր շահառուն և կատարման հիմնական պատասխանատուն ունկնդիր դասախոսն է: Յուրաքանչյուր ունկնդիր ըստ Հենքային ծրագրի ինքն է կազմում և վարում իր Անհատական ծրագիրը, ժամանակին ՈւՎ-ին իրազեկում վաստակած կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական կրեդիտների մասին՝ ներկայացնելով դրանք հավաստող փաստաթուղթ:
- 3.4. Ամբիոնները և ֆակուլտետները նույնպես վերահսկում են իրենց դասախոսական համակազմի կողմից ՈԲ ծրագրի կատարումը՝ նկատի ունենալով, որ այդ մասին ամենամյա տեղեկատվություն է ներկայացվում ԵՊՀ ԻՄ գիտխորհուրդ: ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումները յուրաքանչյուր ուսումնական տարի թարմացնում են առաջարկվող կամընտրական դասընթացների ցանկը՝ ուղղորդելով իրենց դասախոսական համակազմի ՈԲ ծրագրի իրականացումը:

4. ՈԲ ծրագրի կազմակերպումը

- 4.1. Սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով հաստատվում են՝
 - 4.1.1. ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ հնգամյա հեռանկարային պլանը (2017-2021թթ.),
 - 4.1.2. ԵՊՀ ԻՄ ՈԲ խորհրդի կազմը:
- 4.2. Մանկավարժական առնվազն երկու տարվա անընդհատ ստաժ ունեցող և 60 տարին չլրացած ԵՊՀ ԻՄ հիմնական դասախոսները 2017 թ. -ից դառնում են ՈԲ ծրագրի ներկա շրջափուլի ունկնդիրներ:
- 4.3. Կրթական մոդուլների ուսումնական ծրագրերը մշակում են պատասխանատու ստորաբաժանումները (ֆակուլտետ կամ ամբիոն):
- 4.4. Ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ՈւՎ-ն ԵՊՀ ԻՄ կայքում տեղադրում է նախատեսվող դասընթացների ցանկը, ծրագրերը և ժամանակացույցը:
 - 4.4.1. Դասախոսն ընտրում է տվյալ կիսամյակում ունկնդրելիք դասընթաց(ներ)ը և ՀԼԿՎ ներկայացնում մասնակցության հայտ:
 - 4.4.2. ՈւՎ-ն իրականացնում է ստացված հայտերի կազմակերպական-տեխնիկական ընտրությունը: Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ են ներկայացրել սահմանված նվազագույն թվակազմով ունկնդիրներ:
- 4.5. Ուսումնական խմբերի ձևավորումը, ունկնդիրների ցուցակը և պարապմունքների սկիզբն ու ավարտը ձևակերպվում են ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:
- 4.6. Դասընթացի յուրացումն ավարտվում է ատեստավորումով (քննությամբ կամ ստուգարքով):
 - 4.6.1. Անգլերենի A1, A2 և B1-C2 մակարդակների համար ունկնդիրները հանձնում են

ներմասնաճյուղային քննություն:

- 4.6.2. Պարապմունքներին մասնակցած, բայց ատեստավորում չանցած ունկնդիրը կարող է կրկնել դասընթացը և նորից հանձնել քննությունը կամ ստուգարքը:
- 4.6.3. «Ընդհանուր պատրաստություն» կրթամասի որևէ բաղադրիչից (բաղադրիչ ներից) ավարտական պահանջներին բավարարող պատրաստություն ունենալու և այն ընդունված կարգով փաստելու դեպքում ճանաչվում է ներկայացված փաստաթուղթը, կամ անցնում է ատեստավորում՝ դասախոսը ստանում է սահմանված կրեդիտները՝ առանց մասնակցելու դասընթացին:
- 4.6.4. Անգլերենից քննություն հանձնած դասախոսը կրեդիտավորվում է ըստ անգլերենի միջազգային քննությունների համարժեքության հաստատված սանդղակի:
- 4.6.5. Հիմնական ծրագրից դուրս դասախոսի ՈԲ-ի, վերապատրաստման կամ կատարելագործման (հանրապետությունում կամ արտերկրում) արդյունքները ճանաչվում են՝ հաշվարկվելով Հենքային ծրագրի համապատասխան բաղադրիչի համար սահմանված կրեդիտների շնորհմամբ:
- 4.7. Հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասից ունկնդիրը կրեդիտներ է կուտակում ծրագրի ներկա շրջափուլում կատարած, ինչպես նաև նախորդ շրջափուլում չհաշվարկված աշխատանքների համար:

5. ՈԲ ծրագրի արդյունքների ամփոփում

- 5.1. Դասախոսի անհատական ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ, որի համար հիմնական չափանիշ է հենքային ծրագրով սահմանված պահանջների կատարումը:
- 5.2. ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ ծրագրի ավարտին (2021-ի հուլիսին) ՈւՎ-ն ճշգրտում է ունկնդրի ներկայացրած փաստաթղթերի իսկությունը, հավաստում նրա մասնակցությունը ծրագրին և ընդհանուր հաշվետվություն ներկայացնում ՈԲ խորհուրդ՝ ամփոփիչ (փաստաթղթային) ատեստավորման:
- 5.3. ՈԲ ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած ունկնդրին խորհրդի որոշմամբ տրվում է սահմանված նմուշի փաստաթուղթ՝ վկայական:
 - 5.3.1. Ամփոփիչ ատեստավորում չանցածները ստանում են տեղեկանք ծրագրին մասնակցելու մասին՝ կատարման ծավալի նշումով:
 - 5.3.2. ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ ծրագրում ընդգրկված այլ բուհերի ունկնդիր դասախոսներին տրվում է հավաստագիր՝ կրթական կառուցամասով մասնակցության ծավալի նշումով: